# ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐ

| N | Թեստային առաջադրանքի ձևը | Հարցը |
|---|---|---|
| 1. | Ճիշտ պատասխանի ընտրություն | Ո՞ր դեպքում է անցկացվում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը.<br><br>**1. մրցույթն անցկացվում է, եթե դիմել է առնվազն մեկ քաղաքացի**<br>2. մրցույթն անցկացվում է, եթե դիմել է առնվազն երկու քաղաքացի<br>3. մրցույթն անցկացվում է անկախ այն փաստից, դիմել են քաղաքացիներ, թե ոչ<br>4. մրցույթն անցկացվում է, եթե դիմել է առնվազն երեք քաղաքացի |
| 2. | Այլընտրանքային ընտրություն | Պատասխանեք «Այո» կամ «Ոչ».<br>Հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող կամ օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական կամ համայնքային ծառայության կադրերի համապատասխան ռեզերվում գտնվող անձը համարվու՞մ է հանրային ծառայող.<br><br>**1. Այո**<br>2.Ոչ |
| 3. | Համապատասխանու-թյան որոշում | Դասավորեք ըստ համապատասխանության՝ ձախ սյունակի տերմինները և աջ սյունակի մեկնաբանությունները.<br><br>1. քաղաքացիական ծառայություն<br>2. քաղաքացիական ծառայության պաշտոն<br>3. քաղաքացիական ծառայող<br>4. քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագիր<br><br>Ա. արժանիքահեն, կարիերային առաջընթացով բնութագրվող, քաղաքական չեզոքություն պահանջող մասնագիտական գործունեություն, որը կատարվում է«Քաղաքացիական ծառայության մասին» օրենքում նշված համապատասխան մարմիններում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ մարմիններին վերապահված լիազորությունների իրականացման նպատակով.<br><br>Բ. համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և |

| | | |
|---|---|---|
| | | այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող, օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ.<br><br>Գ. համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող իրավունքներ ու պարտականություններ, մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ պահանջող կառավարման համակարգում տեղակայված, քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված հաստիքային միավոր.<br><br>Դ. Հայաստանի Հանրապետության քաղաքացի, որը «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով զբաղեցնում է քաղաքացիական ծառայության պաշտոն և կատարում է այդ պաշտոնին վերապահված մասնագիտական գործունեություն կամ գրանցված է քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում և վարձատրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.<br><br>**1. 1-Ա, 2-Գ, 3-Դ, 4-Բ**<br>2. 1-Գ, 2-Ա, 3-Բ, 4-Դ<br>3. 1-Գ, 2-Ա, 3-Դ, 4-Բ<br>4. 1-Ա, 2-Գ, 3-Բ, 4-Դ |
| 4. | Հաջորդականության որոշում | Դասավորել քաղաքացիական ծառայողի նկատմամբ իրականացվող ծառայողական քննության փուլերը ըստ հաջորդականության.<br><br>Ա.ծառայողական քննության անցկացում և ավարտում |

| | | |
|---|---|---|
| | | Բ.ծառայողական քննության արդյունքների հիման վրա համապատասխան եզրակացության կազմում և այն ներկայացնելը<br>Գ. ծառայողական քննության նյութերին ծանոթացում<br>Դ.ծառայողական քննության նշանակում<br><br>1. 1-Ա, 2-Գ, 3-Բ, 4-Դ<br>**2. 1-Դ, 2-Ա, 3-Գ, 4-Բ**<br>3. 1-Գ, 2-Դ, 3-Ա, 4-Բ<br>4. 1-Բ, 2-Դ, 3-Ա, 4-Գ |